

**ՔՅԱԹԻՔ ՉԵԼԵՔԻԻ «ՋԻՀԱՆ-ՆՅՈՒՄԱ»-Ն ՈՐՊԵՍ ԱՂԲՅՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԴՐՈՒԹՅԱՆ**

Ա. Հ. ՓԱՓԱՉՅԱՆ

Քյաթիր Չելեքին¹, որ իր ժամանակի զարգացած անձնավորություններից էր, առանձնահատուկ ուշադրություն է դարձրել թարգմանության գործին² և լայն չափով օգտագործել է արևմտաեվրոպական աղբյուրները:

«Ջիհան-նյումա»-ն հանդիսանում է առաջին ընդհանուր պատմա-աշխարհագրական աշխատությունը, որի շարադրանքը Քյաթիր Չելեքին ձեռնարկել է 1648 թ.: Դրություն ունեն «Ջիհան-նյումա»-ի երկու անավարտ խմբագրություններ: Նրանցից առաջինը դրված է արաբական և պարսկական աղբյուրների հիման վրա: Եվրոպական երկրների վերաբերյալ բավարար նյութերի բացակայության պատճառով աշխատությունը մնացել է անավարտ: Այդ իսկ պատճառով եվրոպական մի քանի ատլասների, հատկապես Գերհարդ Մերկատորի «Atlas Minor»-ի թարգմանությունից հետո Քյաթիր Չելեքին ձեռնամուխ է լինում «Ջիհան-նյումա»-ի երկրորդ խմբագրությանը⁴: Քյաթիր Չելեքին այս երկրորդ աշխատությունը, ի տարբերություն եվրոպական աշխարհագետների, սկսում է ասիական երկրների նկարագրությամբ:

«Ջիհան-նյումա»-ի առաջին խմբագրության ձեռագիրը հազվագյուտ է օգտագործվել, քանի որ այն դեռևս չի հրատարակվել և դժվար հասանելի է գիտնականների լայն շրջաններին: «Ջիհան-նյումա»-ի առաջին խմբագրությունից ավստրիացի պատմաբան Համմերը գերմաներենի է թարգմանել միայն Բալկանյան թերակղզու երկրներին վերաբերող նյութերը⁵:

«Ջիհան-նյումա»-ն թուրքերեն տպագրված առաջին գրքերից մեկն է, այն հրատարակել է թուրքական առաջին տպարանի հիմնադիր, ծագումով հունգարացի Իբրահիմ Մյուսթեֆերիկյան 1732 թ.: Այս հրատարակությունը ունի բազմաթիվ լրացումներ՝ կատարված XVII դարի արաբ աշխարհագրագետ Աբու Բեքր Իբն-Բահրամի (մեռ. 1691 թ.) «Ջոկրաֆիյա-ի Քարիր» (Մեծ աշխարհագրություն) գրքի հիման վրա և մի շարք հավելվածներ ու քարտեզներ՝ բերված հրատարակչի կողմից: Անհրաժեշտ է նշել, որ Իբրահիմ Մյուսթեֆերիկյան մտադիր է եղել «Ջիհան-նյումա»-ն հրատարակել երկու հատորով, որոնցից առաջինը պիտի ընդգրկեր Ասիա մայր

¹ XVII դարի ականավոր թուրք պատմագիր և աշխարհագրագետ Մուստաֆա Իբն Արդուլլահ-հր (1609—1657) արևելագետների շրջանում առավելապես հայտնի է Քյաթիր Չելեքի կամ Հաջի Խալիֆա անուններով: Այդ մասին տե՛ս Ա. Խ. Սաֆրասոյան, XVII դարի թուրքական գիտական մտքի ներկայացուցիչներ Քյաթիր Չելեքին և էվլիա Չելեքին, «Արևելագիտական ժողովածու», հատ. 2, 1964, էջ 283—301:

² Տե՛ս Ա. Խ. Սաֆրասոյան, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատ. Ա, Երևան, 1961, հատ. Բ, 1964: Տպագրվում են նաև Գ և Դ հատորները:

³ «Ջիհան-նյումա»-ի վերաբերյալ գոյություն ունեն մի շարք ուսումնասիրություններ, որոնցից առավել բովանդակալից են ակադ. Ի. Յու. Կրաչկովսկու և գերմանացի արևելագետ Ֆ. Թեշների աշխատությունները: Տե՛ս F. Taeschner, Die Geographische Literatur der Osmanen ZDMG, 77(2), 1923. II. Ю. Крачковский, Избранные сочинения, т. IV, М.—Л., 1957. Abdulhak A. A., La Science chez les turcs Ottomans, Paris, 1934, էջ 107. Katip Celebi, Hayati ve eserleri hakkında incelemeler, Ankara, 1757, O. S. Gokyay, s. 61, H. S. Selen, s. 121.

⁴ Օտար գրականության թարգմանության գործում նրան օգնել է ֆրանսիացի դավանափոխ Նեյխ Մուհամմեդ Իսլասին:

⁵ Տե՛ս J. von Hammer, Rumeli und Bosna, Wien, 1812.

ցամաքի նկարագրությունը, իսկ երկրորդ հատորը՝ Եվրոպան, Աֆրիկան և Ամերիկան: Սակայն երկրորդ հատորը հրատարակելու նրա մտադրությունը չի իրագործվել:

«Ջիհան-նյումա»-ի առանձին ղլուխներ թարգմանվել են տարբեր լեզուներով, ամբողջությամբ թարգմանվել է լատիներեն Մ. Նորրեբերգի կողմից: Ինչպես նշում է ակադեմիկոս Ի. Յու. Կրաչկովսկին՝ «Ներկայումս այդ թարգմանությունը կարելի է միանգամայն հնացած համարել, հակառակ Նորրեբերգի ժամանակին կատարած բոլոր ծառայություններին⁶: Լատիներեն մի այլ թարգմանություն De Liber Mundum Ostendens վերնագրով (կատարված Օ. Հ. Կելվինգի, Վ. Հուսսորդի և Տ. Ստուրմերի կողմից) անտիպ վիճակում գտնվում է Վիեննայի Մխիթարյանների գրադարանում: Գոյություն ունի նաև Հայաստանին, Քուրդստանին և մասամբ Արարական Արևելքի երկրներին վերաբերող նյութերի ֆրանսերեն թարգմանությունը, որ կատարել է ուսարևելագետ Ֆ. Շարմուան⁷: Փոքր Ասիային վերաբերող նյութերի ֆրանսերեն մի այլ թարգմանություն գտնվում է Սեն Մարտինի (Histoire des découvertes géographiques) «Աշխարհագրական հայտնագործումների պատմության» մեջ: «Ջիհան-նյումա»-ի ոչ լրիվ թարգմանությունը եղել է նաև հայերեն՝ Հակոբ Նալյանի կողմից կատարված, որը սակայն մնացել է անտիպ⁸: Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների վերաբերյալ նյութերը մասնակի կրճատումներով խրատված են Ա. Խ. Սաֆրաստյանը⁹: Տողերիս ղրողը պատրաստում է Հայաստանին վերաբերող նյութերի ուսերեն առաջին գիտական թարգմանությունը՝ անհրաժեշտ ծանոթագրություններով: Այստեղ հարկ ենք համարում ճշտել մի փաստ: Լեոն «Հայոց պատմության» մեջ գրում է, թե իբր «Ջիհան-նյումա»-ն հայերենի թարգմանել է նույն XVII դարում Լեւոնիա Զելեպի Քյոմուրճյանը¹⁰: Այդ մասին թե՛ իմ որոնումները և թե՛ Երեմիա Քյոմուրճյանի կյանքի և գրական ժառանգության վերաբերյալ վերջերս կատարած ուսումնասիրությունները հանգեցնում են այն եզրակացության, որ նման թարգմանություն գոյություն չի ունեցել¹¹:

«Ջիհան-նյումա»-ի հրատարակությունը, որը ներկայումս հանդիսանում է մատենագիտական հաղվագյուտ օրինակ, բաղկացած է ընդարձակ ներածությունից և առանձին ղլուխներից, ուր տրված է ասիական երկրների նկարագրությունը:

Քառասունմեկերորդ ղլուխը նվիրված է Հայաստանի նկարագրությանը¹²: Այս ղլխում խոսվում է միայն Արևմտյան Հայաստանի մասին, այսինքն այն նահանգների մասին, որոնք Կասրի Շիրիկի պայմանագրով (1639) մնացին Օսմանյան կայսրության տիրապետության տակ: Քյաթիր Զելերին այս ղլխում Արևելյան Հայաստանի նկարագրությունը չի տվել: Արևելյան Հայաստանը, որտեղ կազմվել էին Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի խանությունները, այդ ժամանակ գտնվում էր Սեֆյան Պարսկաստանի գերիշխանության ներքո: Արևելյան Հայաստանի նահանգների նկարագրությունը տրվում է 39-րդ ղլխում, Վրաստանի և Ադրբեջանի քաղաքների նկարագրության հետ¹³:

Անհրաժեշտ է նշել, որ «Ջիհան-նյումա»-ում տեղ են գտել որոշ անճշտություններ, որոնց բոլորին սակայն հնարավոր չէ այստեղ անդրադառնալ: Դրանք, ըստ աղբյուրագիտական սկզբունքի, կմեկնարանվեն մեր ուսերեն թարգմանության ծանոթագրություններում: Այստեղ կանգ կառնենք միայն մի քանի հարցերի վրա, որոնք ընդհանրապես չեն շոշափվել հայ պատմագրության մեջ:

Այսպես, Հայաստանի սահմանները նկարագրելիս Քյաթիր Զելերին, ըստ պարսիկ և արաբ աշխարհագիրների, մեջ է բերում այդ մասին գոյություն ունեցող տարբեր տեղեկություններ և

⁶ Ի. Ю. Крачковский, 1136p. соч., т. IV, էջ 621.

⁷ St'ou F. B. Charmoy, Cheref-nameli ou fastes de la nation kourde par Cheref-ouddine, St. Petersburg, 1868.

⁸ Տե՛ս Հ. Սիրունի, Հայաստանը ըստ թուրք աշխարհագիրներու, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3:

⁹ Տե՛ս Ա. Խ. Սաֆրաստյան, նշվ. աշխ., հատ. Բ, էջ 13—73:

¹⁰ Լեոն, Հայոց պատմություն, հատ. 3, Երևան, 1946, էջ 101:

¹¹ St'ou Eremya Celebi Kömürçüyan, Istanbul Tarîhi, Istanbul, 1952 s. XXIII, Ե. Ս. Սահակյան, Երեմիա Քյոմուրճյան, Երևան, 1964:

¹² Քյաթիր Զելերին ավելի քան 10 տարի շարունակ մասնակից է եղել օսմանյան բանակի արշավներին, շրջել է Հայաստանի շատ քաղաքներ, գյուղեր, բերդեր, վանքեր և ականատես է եղել մի շարք պատմական դեպքերի:

¹³ کاتب چلبی، جهاننما، استانبول، ۱۳۳۲، ص ۳۸۹

իր հայեցողությամբ հաստատում, որ «ներկայումս Մեծ Արմենիան բաղկացած է Վանի, Կարսի և էրզրումի վիլայեթներից, իսկ փոքր Արմենիան՝ Աղանայի և Մարաշի վիլայեթներից»¹⁴,

նախ պետք է նշել, որ Աղանայի և Մարաշի վիլայեթները պատմականորեն չեն մտել Փոքր Հայքի սահմանների մեջ, Փոքր Հայքի տերիտորիան հանդիսանում էր հոռմենական Կապադովկիա նահանգի այն մասը, որը ընդգրկում է Դայլ գետի (Կելկիտ Հրմաթ) վերին և միջին ավազանները, Հալիս գետի (Կըղըլ Հրմաթ) վերին հոսանքի շրջանները և Տերիկ գետի ավազանն ամբողջությամբ¹⁵։ Ինչ վերաբերում է Աղանայի վիլայեթին, ապա նա մտնում էր Կիլիկիայի հայկական թագավորության սահմանների մեջ XI—XIII դդ., իսկ Մարաշը երբեմն անցել է Կիլիկիային, իսկ երբեմն էլ հիմնել ինքնավար հայկական իշխանություն։

Ժիշտ չէ պատկերված նաև Մեծ Հայքը, որովհետև բոլորովին մոռացության է տրված Արևելյան Հայաստանը։ Քյաթիր Չելերին, ինչպես վերը նշեցինք, Հայաստանը նկարագրելիս նկատի է ունեցել միմիայն Արևմտյան Հայաստանը։ Բացի այդ, XVІI դարում Արևմտյան Հայաստանի տերիտորիայում մտնում էին ոչ թե երեք, այլ հինգ վիլայեթներ՝ այդ թվում Վանը, էրզրումը, Կարսը, Դիարբեքիրը և Ջըղըրը։

Քյաթիր Չելերին, հավանաբար, ստույգ աղբյուրներ չի ունեցել Կիլիկիայի հայկական թագավորության վերաբերյալ, այդ պատճառով էլ գրքում առաջացել են որոշ թյուրիմացություններ։ Սրինակ, նա գրել է. «ներկայումս նրանց (հայերի) մայրաքաղաքը Սրսն է, կամ ո՞ր ուրիշ անդ վկայակոչելով Համդալլա՝ ալ-Կազվինին՝ «Սիսը, Թարսուսը և Կիրրոսը նրա (Հայաստանի) մեծ քաղաքներից են», առանց ակնարկելու Կիլիկիայի հայկական թագավորությունը։ Հայտնի է, որ Սիսը եղել է Կիլիկիայի հայկական թագավորության մայրաքաղաքը XI—XIII դդ., իսկ Կիրրոսը միայն քաղաքականապես է ենթարկվել նրան։

Թյուրիմացություն պետք է համարել նաև այն, որ «Արմենիա երկրի մասին» գլխում Դվիսը և Դերիլը համարվել են տարրեր հայկական քաղաքներ. նույնիսկ Դերիլը (էջ 418) ընգրկվել է Վանի վիլայեթի նկարագրության մեջ։ Մինչդեռ Դերիլն ու Դվիսը միևնույն քաղաքի անվանումներն են, Դվիսը հայկական անվանումն է, իսկ Դերիլը՝ արաբական։ Դվիսը պատմականորեն երբեք չի մտել Վանի վիլայեթի մեջ, XVІI դարում այն մտնում էր Ծոփաքանի խանության կազմի մեջ։

Նշենք նաև մի այլ հանգամանք, որը հաճախ տեղի է տվել շփոթության։ «Ջիհան-նյումա»-ի հեղինակային ձեռագրում և զանազան գրություններում Հայաստանի նկարագրությունը ընդհատվում է Վանի վիլայեթով։ Այս կապակցությամբ Իբրահիմ Մյութեֆերիկյան հրատարակության հավելվածում մեզ տեղեկացնում է հետևյալը.

«Հավանական է, որ այս գրքի շարունակությունը կորել է կամ գաժան մահը չի թույլատրել (հեղինակին) կատարելու իր խոստումը։ Ուստի, նվաստս՝ որպեսզի գոնե մոտավորապես իրագործեմ հանգուցյալի նպատակն ու ցանկությունը, խոնարհաբար, իմ հնարավորության սահմաններում տալիս եմ երկրների և պետությունների նկարագրությունը, ձգտելով պահպանել նրա (Քյաթիր Չելերիի) աշխատության շարադրանքի ոճն ու հաջորդականությունը»¹⁶։ Այստեղից պարզ է, որ Քյաթիր Չելերիի գրչին է պատկանում «Արմենիա երկրի մասին» գլուխը և Վանի, Կարսի վիլայեթների նկարագրությունը, իսկ էրզրումի, Դիարբեքիրի, Սըվազի, Մարաշի և Աղանայի նկարագրությունը պատկանում է Իբրահիմ Մյութեֆերիկյանին։

Վերջին շրջանում Անկարայում թուրքական պատմության ընկերությունը՝ Türk tarih kurumu, հատուկ ուշադրություն է դարձնում Թուրքիայի պատմությանը վերաբերող պատմական նյութերի և առանձին գիտա-հետազոտական մենագրությունների հրատարակմանը։ Ուսկայն ժամանակակից թուրք պատմաբանները իրենց աշխատություններում հետապնդում են շովինիստական նպատակներ, փորձելով նենգափոխել և խեղաթյուրել համաշխարհային ճանաչում ստացած պատմական գեպքերը։ Նրանք հատկապես ճգնում են ժխտել հայ ժողովրդի պատմական անցյալի, Արևմտյան Հայաստանի գոյությունը։ Մենք այստեղ մտադիր չենք հանգամանորեն կանգ առնելու պատմական այդ կեղծիքների վրա, քանի որ այդ հարցը ըստ

¹⁴ Նույն տեղում, էջ 410։

¹⁵ Տե՛ս Ու. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963 (քարտեզը)։ Թ. Ն. Հակոբյան, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960, էջ 105։

¹⁶ էջ 22, جہانما، ص.

արժանվոյն շոշափվել և մերկացվել է սովետահայ պատմաբանների կողմից: Մենք այստեղ համառոտակի կնշենք թուրք հեղինակների այն նենգափոխումները, որոնք վերաբերում են Քյաթիր Զելերիի «Ջիհան-նյումա»-ին:

Հայտնի է, որ 1957 թ. Քյաթիր Զելերիի մահվան 300-ամյակի կապակցությամբ Անկարայում լույս տեսավ ժամանակակից թուրք պատմաբանների ժողովածուն¹⁷, որտեղ Համիդ Սադի Սելենը տպագրել է առանձին ուսումնասիրություն «Ջիհան-նյումա»-ի վերաբերյալ: Այդ ուսումնասիրության մեջ նույնությամբ բերված են այն երկրների անունները, որոնք նկարագրվել են Քյաթիր Զելերիի կողմից, սակայն «Ջիհան-նյումա»-ում շատ պարզ գրված «Արմենիա երկրի մասին» վերնագիրը դարձել է «Արևելյան Անատոլիա»¹⁸:

Ավելին, 1957—1963 թթ. Ստամբուլում լույս տեսավ հատուկ հանձնաժողովի կողմից գրված «Հնդարձակ Օսմանյան պատմություն»¹⁹ խորագիրը կրող վեցհատորյա աշխատությունը, որը բովանդակում է թուրքիայի պատմությանը վերաբերող նյութերը սկզբից մինչև 1923 թ. հանրապետական կառավարությունը: Այս բազմահատորյակում յայնորեն օգտագործված են թուրքիայում պահվող հարուստ արխիվային նյութերը, վավերական փաստաթղթերը և հյուսկապես միջնադարի թուրքական աղբյուրները: Այդ աղբյուրները հաճախ նույնությամբ մեջ են բերված ժամանակակից յատինատառ թուրքերենով: Այս հատորներում օգտագործված են նաև Քյաթիր Զելերիի աշխարհագրական և պատմական բոլոր աշխատությունները: Գրքում, բացի պատմական դեպքերի նկարագրությունից, պարբերաբար բերված են հավելվածներ (ilâve) պատմական հայտնի դեմքերի, տերմինների, Օսմանյան կայսրության ներքին կառուցվածքի, նրա սահմանների մեջ մտնող երկրների և այլ հարցերի վերաբերյալ:

Բայց ո՞ր է Հայաստանը....

Թուրք պատմաբանները, հավատարիմ մնալով պատմության խեղաթյուրման և նենգափոխման իրենց առանձնահատուկ «արվեստին», չարամտորեն ոչ մի տող չեն հատկացրել Հայաստանին, կարծելով որ այդպիսով մոռացության կտան պատմական Հայաստանի գոյությունը: Միայն վեցերորդ հատորում թուրքիկ կերպով խոսվում է հայերի թուրքիայում մշտապես լավ ապրելու () և XIX դարի վերջի ու XX դարի սկզբում տեղի ունեցած հայկական շարժումների մասին, որոնք, հեղինակների կարծիքով, պատճառ են հանդիսացել հայ ե թուրք ղանգվածների «փոխադարձ» () կոտորածների:

Այսպիսով, ինչքան էլ որ թուրք ժամանակակից պատմաբանները աշխատեն անտեսել և նենգափոխել Հայաստանի նահանգների «Ջիհան-նյումա»-ում շարադրված նկարագրությունը, այն հանդիսանում է գիտական կարևոր արժեք ներկայացնող պատմական աշխարհագրություն՝ ասիական երկրների, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանի վերաբերյալ:

¹⁷ Katip Çelebi, Hayatı ve eserleri hakkında incelemeler, Ankara, 1957.

¹⁸ Նույն տեղում, էջ 127:

¹⁹ Mufasssal Osmanlı tarihi, İstanbul, 1957—1963.